**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

01-ը հունիսի 2018թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

Գնահատողներ

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան /ԳԱՊ/,

ՀՀ ԶՈՒ ավիացիայի վարչության ԱՏՕՒ և ավիացիոն սպառազինության ծառայության պետ, փոխգնդապետ Ա. Համբարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌէՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թունյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:

Բացակայում է՝ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի տնտեսագիտական վերլուծության և գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Գ. Տերյան)

1. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 18.05.2018թ. թիվ ԳԲԽ-ԷԱ-2018/61 որոշումը քննարկելու մասին:
2. Մասնակցի՝ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 18.05.2018թ. թիվ ԳԲԽ-ԷԱ-2018/61 որոշումը քննարկելու մասին**

---

(Գ. Տերյան)

1. Լևոն Ալբերտի Թաղևոսյանը 20.04.2018թ. բողոքարկել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 06.04.2018թ. կայացած նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումը «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն /կոնսորցիում «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ հետ/ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու որոշումը, որը 22.05.2018թ. հրապարակված ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 18.05.2018թ. թիվ ԳԲԽ-ԷԱ-2018/61 որոշմամբ մերժվել է: Ուստի գնահատող հանձնաժողովը շարունակել է «Էլիտ Հիլզ» ՍՊԸ որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Մասնակցի՝ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Գ. Տերյան)

1.1 «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն /կոնսորցիում «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ հետ/ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: ***ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն /կոնսորցիում «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ հետ/ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:***

1.2 01.06.2018թ. որակավորման նիստի ավարտի օրը՝ հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Էլիտ Հիլզ» ՍՊԸ որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10 րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Գ. Տերյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Կարապետյան

Գնահատող Ա. Համբարյան

Գնահատող Լ. Թունյան

Գնահատող Կ. Բրուտյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան